



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

24 օգոստոսի 2018 թվականի N 140-Ա

Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 226-րդ հոդվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2018 թվականի հուլիսի 3-ի N 170-Ա որոշմամբ իրականացված ներքին աուդիտի հաշվետվությունը, ինչպես նաև *Ս. Հովհաննիսյանի գրավոր բացատրությունը՝ կարգադրում եմ.*

1. Աշխատանքային կարգապահությունը խախտելու՝ աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Նորգյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն *Սերյոժա Վազգենի Հովհաննիսյանի* նկատմամբ կիրառել *«խիստ նկատողություն»* կարգապահական տույժը:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2018 թվականի օգոստոսի 24  
ք. Հրազդան



ՈՒՊԵՏՐՈՍՅԱՆ